<<ՏՈՆՏՈՆ>> ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՍՊԸ

2023թ.
տարեկան

1. Ընկերության գործունեության վրա կարող են ազդել ներքին, ինչպես նաև արտաքին միջավայրում տեղի ունեցող փոփոխությունները, մասնավորապես՝ ՀՀ տնտեսությանն ու ֆինանսական շուկային առնչվող օրենսդրական փոփոխությունները, Կենտրոնական բանկի դրամակավարկային քաղաքականության փոփոխությունը, արտարժույթի փոխարժեքի տատանումները, տոկոսադրույքների փոփոխությունը, զարգացումները միջազգային ֆինանսական շուկաներում և այլն:

Ունենալով կառավարման պարզ համակարգ՝ Ընկերությունում որոշումներն ընդունվում են առանց ձգձգումների, այդ իսկ պատճառով Ընկերությունը կարողանում է արագ արձագանքել վերը նշված փոփոխություններին և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները գործունեությունը նոր միջավայրին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Ներդրումային ընկերությունների շարքում առաջատար դիրքերի ամրապնդման և մրցունակության պահպանման համար Ընկերությունը մշտապես ապահովում է մատուցվող ծառայությունների բարձր որակ, իրականացնում է ֆինանսական շուկայի շարունակական հետազոտում և վերլուծություն, ինչը հնարավորություն է տալիս Ընկերությանը տեղեկացված լինել շուկաներում տեղի ունեցող բոլոր զարգացումներին և նոր մարտահրավերներին:

Ֆինանսական տարին ամփոփելուց հետո օրենքով սահմանված ժամկետներին համապատասխան Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը որոշում է կայացնում Ընկերության շահաբաժինները վճարելու կամ չվճարելու, ինչպես նաև վճարման ժամկետների մասին:

2. Ընկերության ֆինանսավորման աղբյուր են ինչպես սեփական, այնպես էլ փոխառու միջոցները: Ընկերությունը մշտապես վերահսկում է սեփական և փոխառու կապիտալի հարաբերակցությունը: Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկերի, այն է՝ տոկոսադրույքների փոփոխման, արտարժութային և իրացվելիության ռիսկերի կառավարման քաղաքականության հիմքում ընկած է ֆինանսական շուկայի անընդհատ և մանրամասն ուսումնասիրությունը, արտարժութային դիրքերից հնարավոր կորուստների գնահատումը, ֆինանսական շուկայում դրամի առաջարկի ուսումնասիրումը և կանխատեսումը, ակտիվներն ու պարտավորություններն ըստ ժամկետայնության և ծավալների կառավարումը և այլն:

3. Ընկերության՝ հաշվապահական հաշվեկշռում չարտացոլվող հիմնական արժանիքներից են.
   - պարզ կառավարման համակարգը,
   - գործարար համբավը, վստահությունն ու հեղինակությունը հաճախորդների և գործընկերների շրջանում,
   - պրոֆեսիոնալ և հավակնոտ աշխատակազմը,
   - գործարար մշակույթի ձևավորված ավանդույթները,
   - նպաստավոր աշխատանքային մթնոլորտը:

Տնօրեն Գոռ Առաքելյան

Գլխ. Հաշվապահ Քրիստինա Քարամյան